# Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 173-Ն և N 211-Ն որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

մայիսի 2019 թվականի N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 173-Ն**
**ԵՎ N 211-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 16-ի «Սուրհանդակային կապի օպերատորի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» N 173-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետը լրացնել նոր 4 ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

<<4) <<Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին>> պայմանագրի հավելված 1-ի հոդված 2-ի 52-րդ կետով սահմանված էքսպրես-բեռը:>>:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 16-ի «Փոստային կապի օպերատորի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» N 211-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-դ կետի 2-րդ ենթակետը լրացնել նոր <<դ>> պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

<<դ. <<Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին>>

պայմանագրի հավելված 1-ի հոդված 2-ի 52-րդ կետով սահմանված էքսպրես-բեռը:>>:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: